REPORTS
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
«Շուշի» բարեգործական հիմնադրամ
info@shoushi.am
ԳԱԳԻԿ Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
gaganj@rambler.ru

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՍԱՐԻ ՄՈՌԱՑՎԱԾ ՎԱՆՔԸ

2014 թ. հունիսին ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արշավախումբը Վարնկաթաղ (հնում՝ Լուլասազ, խորհրդային տարիներին՝ Հակոբ Կամարի) գյուղի բնակիչ, տեղանքին քաջատեղյակ Միքայել Բախշյանի ուղեկցությամբ այցելեց ավերակ դարձած վանական համալիրը: Այս վայրը հնուց ի վեր շրջակա գյուղերի բնակիչների մոտ հայտնի է Թղկասար, կամ Մեծ Թղկասարի վանք անվանմանբ, որը ոչ այլ ինչ է քան Կաթողիկոսասար բառի արցախյան բարբառին յուրահատուկ կրճատված ձևը:



Կաթողիկոսասարի վանքը գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վարնկաթաղ համայնքի վարչական տարածքում, Թարթառ գետի աջ ափին, Տոնաշեն գյուղին արևելքից հանդիպակաց Կաթողիկոսասարի լեռնաշղթայի արևմտյան

լանջին առանձնացող անտառապատ բարձունքի հարթ կատարին (աշխարհագրական կոորդինատներն են՝ N. 40 17 33,5 E. 46 42 34,9 Alt. 630): Համալիրի զբաղեցրած շուրջ 0,6–0,8 հա. տարածով հարթակը գետի մակարդակից բարձր է 150 մ և այնտեղից ազատ դիտարկվում է Թարթառի գեղատեսիլ գետահովիտը հարավակողմից մինչև Ջրաբերդ:

Վանքի զբաղեցրած բարձունքը հյուսիսից

Թառթառի կիրճի վերին հոսանքի տեսքը վանքից

Հուշարձանին հնարավոր է մոտենալ Մատաղիսից դեպի Ջրաբերդ–Երիցմանկանց վանք տանող ավտոճանապարհից, ոտքով, հաղթահարելով խիստ թեքադիր, անտառապատ տեղանքը:

Վանական համալիրը մեզ է հասել հիմնավեր վիճակում, պատված փլատակներով, հողածածկույթի շերտով, խիտ բուսականությամբ ու անտառով: Ավերածությունների աստիճանը այնպիսին է, որ այսօր դժվար է որոշակիորեն խոսել վանական համալիրի կազմում երբեմնի եղած շինությունների ու բաղադրամասերի քանակի, տիպի, բնույթի ու զբաղեցրած տարածքի մասի: Դատելով պահպանված հետքերից, կարելի է որոշ վերապահումով ասել, որ համալիրը բաղկացած է եղել առնվազն երկու եկեղեցիներից, նրանց միջնամասում մի մեծ ուղղանկյուն շինությունից (հնարավոր է գավիթ, ժամատուն կամ, նույնիսկ՝ եկեղեցի), գերեզմանոցից, միաբանության բնակելի ու կենցաղային կառույցների երկու համալիրներից և այս ամենը ներփակող պարսպապատից: Համալիրի կենտրոնական, պարսպապատ հատվածից դուրս, դեպի արևելք, տարածվում է ընդարձակ ներճկված «Վանքի դուզ» կոչված բաց, հարթ հրապարակ, որը, հնարավոր է, ժամանակի արհեստական ջրամբարից (ծովատեղ) մնացած բացատն է:

Պարիսպը ուրվագծվում է հարթակի մակարդակի կտրուկ անկմամբ առաջացած եզրագծին տեղ տեղ նկատվող քարակիր շարվածքի հետքերով: Պարիսպը, մասամբ, նաև հարթակի տարածքը լայնացող հենապատի նշանակություն է ունեցել:

Աղվանից կաթողիկոսությունը Տեր Հովհաննեսը Պարտավից տեղափոխել է Արցախ՝ Թարթառի աջափնյա Կաթողիկոսի Քար կոչվող վայրը, որը նախկինում ևս որպես ամառանոց էր ծառայել[1]: Ըստ երևույթին, այս վայրը որպես կաթողիկոսական ամառանոց է ծառայել սկսած 551 թվականից, երբ Ամենայն Հայոց հայրապետի կողմից Աղվանքի, Լփնաց և Չողա կաթողիկոս է ձեռնադրվում Արցախի Մեծիրանք գավառի եպիսկոպոս Աբասը (551–595 թթ.): Կաթողիկոսարանի տեղափոխման տարեթիվը գտնելու համար Մեծկուանքից Տեր Հովսեփի կաթողիկոսության հայոց 300 թվականից հանելով Տեր Դավթի, Տեր Մովսեսի և Տեր Հովհաննեսի կաթողիկոսության տարիները, ստանում ենք հայոց 246 թվականը (քր. 797թ.): Պարտավում արաբական իշխանության տարիներին մահմեդականները ամեն կերպ ձգտում էին հավատափոխ անել հայերին, վերացնել Աղվանից կաթողիկոսությունը: Տեր Հովհաննեսը կաթողիկոսությունը փրկելու նպատակով այն տեղափոխվում է Վաչականյան թագավորական տան նստավայր հանդիսացած Դյուտականից ոչ հեռու վանքը: Իսկ Դյուտականը նաև մայրաքաղաք կամ Բերդակ (Կարապետանց քար) էր կոչվում: Պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը ևս հաստատում է, որ Վարնկաթաղ եւ Տոնաշեն գյուղերի արանքում գտնվող Կաթողիկոսի քար կոչվող վայրն էլ Աղվանից կաթողիկոսներին որպես ամառանոց է ծառայել[2]: Այս հանգամանքը ևս հաստատում է, որ եթե հարթավայրերում տիրություն էին անում նվաճողները, ապա լեռներում տիրապետում էին բնիկ հայ իշխանները, որոնք էլ իրենց ժողովրդի հետ ամրացված անմատույց լեռներում, պահպանում էին ազգային մշակույթը, գիրն ու գրականությունը, հավատքը, սրբավայրերը, սովորությունները, ծեսերն ու ազգային ավանդությունները:

Վանքի ճակատագրի մասին ստույգ տեղեկություն է տալիս Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքի» հիշատակարանում: Մխիթարյան միաբանությունը այն կցել էր Վենետիկի թիվ 1237 ձեռագրին, որն էլ հետագայում կցվում է Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքին: Մխիթար Գոշը իր այս աշխատությունը սկսում է Սբ. Եղիշեից (առաջին դար) սկիզբ առնող Աղվանից կաթողիկոսների անուններից: Ապա նկարագրում է 1139 թ. Արեգ (հայկական տոմարի 8-րդ ամիսը՝ սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 12-ը) ամսի 18-ին, ուրբաթ գիշերվա լույս շաբաթ, այսինքն՝ սեպտեմբերի 30-ին Արցախում և Գարդմանքում տեղի ունեցած ահավոր երկրաշարժը: Այն ամբողջովին ավերում է Գանձակ քաղաքը: Գրում է, թե ինչպես Աղվանից Գևորգ կաթողիկոսը գիշերվա ժամին արթնանում է, ականատես լինում «ցասումն բարկութեանն

[1] **Մովսես Կաղանկատուացի**, 1983, 345:
[2] **Ուլուբաբյան Բ.**, 1975, 116:

Աստուծոյ ի վերայ աշխարհի ի բռնութենէ հողմաց եւ շարժեալ անհնարին դողմամբ սաստիկ կործանումն հասուցանելով աշխարհիս»[3]:

Երկրաշարժի մասին հետաքրքիր տեղեկություն է հայտնում Կիրակոս Գանձակեցի պատմիչը. «Փլավ եւ լեառն Ալիարակ ի շարժմանէն, եւ արգել զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա, եւ եղեւ ծովակ, որ է մինչեւ ցայսօր»[4]: Ալիարակն այժմ Կեփաս է կոչվում, որը կովկասյան թաթարների լեզվում Քյափազ է դարձել, Մարիամ լիճը՝ Գյոյ գյոլ:

Գոշը նկարագրում է, թե ինչպես վրաց Դիմետրե թագավորը, տեղեկանալով ահավոր երկրաշարժի մասին, զորքով գալիս է Գանձակ քաղաքը. «եկեալք անողորմ եւ գազանային բարուք՝ յարեան ի վերայ մնացորդաց մարդկանն՝վարելով առ հասարակ ի սուր եւ ի գերութիւն, որ թեպետ եւ տեսին զքաղաքն զայն, որ առաջագոյն էր քաղաք վայելուչ, որպես զդժոխք եղեալ յանկարծակի, զի միասին կուտեալ էին ի նմա բոլոր ոսկւոյ եւ բլուրք ոսկերաց մարդկան, յորում եւ անկեալ կային անթիվ բազմութիւնք դիականց, սակայն ոչ կամեցան առնել ողորմութիւն ի վերայ նորա, այլ փորէին՝ հանելով զանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ գերելով եւ տառապանաւք առաւել չարչարեցին քան զժաժմանն»: Այնուհետև վրաց զորքը հալածում, հետապնդում է Գևորգ կաթողիկոսին, որը ապաստանում է արցախյան Կաթողիկոսասարի ամառանոցում, սպանում է Սարգիս եւ Գրիգոր վարդապետներին, որոնք փորձել էին Աստծո խոսքով ուշքի բերել ոսկու առատությունից շլացած ու գազազած վրաց արքային ու զինյալներին: Հայտնի է, որ Վրաց թագավորն իր հետ որպես ավար տանում է նաև Գանձակի երկաթյա մեծ դարպասը[*]: Վրաց զորքը հսկա ավարով ու բազում գերիներով հեռանում է իր երկիրը:

Այնուհետև Գանձակ է գալիս Խարասնգուր ամիրան, որը արագ վերականգնում է Գանձակի պարիսպներն ու բազմաթիվ շինություններ: Հայտնի է, որ Գանձակը հիմնականում բնակեցված էր հայերով ու հայկական քաղաք էր համարվում, անկախ այն հանգամանքից, թե այդ պահին որ նվաճողն էր տիրում: Պարզապես քաղաքն ու նրա բնակչությունը հարկատու էր նրանց: Խարասնգուրը հետո զորքով արշավում է Վրաստան՝ վրեժ լուծելու վրաց թագավորից:

Գանձակի շահապ (քաղաքագլուխ) է կարգվում ոմն Խուհտուղտի, որը անմիջապես ապստամբում է սուլթանի դեմ: Ընդհանրապես, շատերը, երկրամասերի կառավարիչ նշանակվելով, առաջին իսկ հնարավորության դեպքում փորձում են անկախանալ, իրենց ենթակայությանը հանձնած երկրամասերը վերանվաճել, մահ ու սարսափ տարածելով այդ տարածքներում: Գոշը նկարագրում է, թե ինչպես Գանձակի նոր շահապը հայոց ՇՂԱ թվականին (քր.

[3] **Կիրակոս Գանձակեցի**, 1961, 352–353.

[4] Նույն տեղում, էջ 117.

[*] Դարպասն այժմ պահվում է Գելաթի (Վրաստան) վանքում:

1142 թ.) գալիս է Հաղահերա (Մռավ) լեռնակողմը, հասնում է Կաթողիկոսի քար բերդը, ինչպես և պաշարում Կարապետանց Քար վայրը, որտեղ Հայոց հյուսիս-արևելյան եզերքի Վաչականյան թագավորական տոհմի նստավայր Դ-յուտական (Դիւտական) «մայրաքաղաքն» էր: «Եւ ի բազում աւուրս պաշարեալ զերկոսին քակմամբ եւ հրկիզութեամբ, – գրում է Մխիթար Գոշը – եւ եկեղեցիք սրբութեան կոխան եղեն՝ անաւրինացն, մինչ զի իսպառ ջնջիլ եւ ավերիլ Կաթողիկոսի քարին ի ՇՂԱ թվակ. Հայոց»:

Սելջուկյան խարխլվող տիրակալության կուսակալները իսկական պատուհաս էին երկրամասի համար: Ահա Պարսկաստանից մի զորագունդ է գալիս Չոլի (Չաւլի) գլխավորությամբ, մեկ ամիս պաշարումից հետո գրավում է Գանձակը, որպես պատիժ հանում ապստամբի աչքերը: Հաջորդ տարի թուրք զորապետ Չոլը զորքով կրկին շարժվում է դեպի Արցախ, ինչպես Գոշն է նկարագրում. «Էառ զամենայն ամրոցս նոցա, քակեաց զեկեղեցիսն եւ զայրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն եւ գերեաց զզորականսն, պէսպէս իսպառ մաշեաց զամենեսեան առ հասարակ ի սուր եւ ի գերութիւն»: Մխիթար Այրիվանեցին ևս նկարագրում է այս դեպքը, գրելով, որ Չոլին խաբեությամբ իր մոտ է կանչում Խաչենի իշխաններին, կալանավորում նրանց, ապա կոտորում անհնազանդներին[5]: Անպաշտպան մնացած երկիրը ավերելը այլևս ոչ մի դժվարություն չէր ներկայացնում: Չոլին անցնում է Պարսկաստան, ապա նոր զորքով կրկին արշավում է դեպի Խաչեն՝ իրենց բերդերում ամրացած ապստամբ հայ իշխաններին պատժելու նպատակով: Եթե բերդերը չի կարողանում գրավել, ապա ավերում, թալանում է բնակավայրերը: «Այրեաց եւ առաքելագիր ուխտ սրբութեան, որ կոչի Դադուի վանք», – դառնությամբ գրում է Մխիթար Գոշը, մանավանդ, որ հետագայում այս վանքում էր մի քանի տարի ապաստանել ու գրել իր «Դատաստանագրքի» առաջին գլուխները:

Այսօր, այս բավականին հետաքրքիր պատմություն ունեցող վանական համալիրի մասին կարելի է խոսել արդեն փաստարկված, հենվելով պահպանված նյութական արժեքների վրա:

Համալիրի կենտրոնական մասում եղել է գերեզմանոցը, որից գետնի մակերեսին մնացել են մի քանի պարզ տապանաքարեր, տեղահանված ու ծառին հենված մի ամբողջական խաչքար և մի մեծ, քանդակազարդ խաչքարի հյուսածո խորաքանդակներով պատված ճակտոնը:

[5] **Մխիթար Այրիվանեցի**, 1860, 63:

Վերջիններս 11–12 րդ դդ բնորոշ նմուշներ են: Գերեզմանոցը ծածկված է հողաշերտով և նրա տարածքը դժվար է սահմանազատել, բայց գետնի մակերեսի խոտածածկույթի տարբերանշաններից կարելի է ենթադրել, որ այն բավականի խիտ ու ընդարձակ է եղել: Հարթակի արևմտյան կողմում, խիտ անտառի մեջ կարելի է տարազատել իրար հաջորդող, շուրջ 20–25 մ. երկարությամբ երկու շինությունների համալիրների ավերակներ: Վերջիններս ուրվագծվում են սենյակներից մնացած բնորոշ փոսորակների ու երկարաձիգ բլրակների տեսքով, որից կարելի է եզրակացնել, որ համալիրները բաղկացած են եղել իրար կից բազմասենյականոց կացարաններից:

Վանական համալիրի հոգևոր մասը տեղակայված է տարածքի կենտրոնական ու հարավային կողմում: Հարթակի ծայր հարավային եզրին, ուղղահայաց գահավիժող ժայռերի պռնկի փոքր բարձրադիր հարթակին կանգնած է եղել մի քարուկիր շինություն, հավանաբար՝ եկեղեցի, որի ներկայիս վիճակից հնարավոր չէ միանշանակ բնութագրել այն: Եկեղեցին, ինչպես նաև համալիրի մյուս շինությունները, կառուցված է տեղի ճեղքված, անմշակ, միջին չափի քարերից, ամուր կրաշաղախով: Կառույցը պատված է ներս ու դուրս, իրար վրա պառկած սեփական պատերի փլատակների մեծ զանգվածներով, որոնք կարող էին առաջանալ շինությունը պայթեցնելու հետևանքով: Տեղում ուրվագծվում է միայն անմիջապես ձորաեզրին դրված հարավային պատի հիմքի մի հատված, փաստելով, որ բուն պատը ընկել է ձորը: Մինչև օրս ձորի հատակին մնացել են պայթեցված վանքի քարաբեկորները: Այսօր այս եկեղեցու ձևի, հորինվածքի, չափերի մասին չի կարելի վստահաբար որևէ բան ասել:

Եկեղեցուց փոքր ինչ հյուսիս-արևուտք նկատվում են փլատակներով ծածկված մի ուղղանկյուն շինության պատերի հիմնամասերը: Շինությունը ամբողջությամբ չի ուրվագծվում և նրա չափերն ու գործնական նշանակությունը պարզ չէ: Քանի որ այս շինությունը հյուսիս-արևմուտքից գրեթե հպվում է կենտրոնական եկեղեցուն, ստացվում է, որ այն դրված է երկու եկեղեցիների

միջնամասում, և, ենթադրաբար, այն կարելի է գավիթ, կամ ժամատուն անվանել: Չի բացառվում, որ այն եկեղեցի եղած լինի:

Կենտրոնական եկեղեցին մեզ է հասել ավերակ, փլատակներով պատված վիճակում: Ճարտարապետական հորինվածքով այն միանավ բազիլիկա է, խորը նստած կիսաշրջան խորանով:



Հուշարձանից մասամբ կանգուն է արևելյան մասը, ուր պատի պահպանված բարձրությունը հասնում է 2.0 մ: Արտաքինից ուղղանկյուն շինություն է, որի արևմտյան կեսը ամբողջությամբ ծածկված է փլվածքներով և կառույցի երկարությունը հստակ չի փաստագրվում: Ուշագրավ է եկեղեցու խորանի կառուցվածքը, որտեղ ակնհայտորեն երևում են վերակառուցման հետքերը: Իր սկզբնական տեսքով այն կառուցվել է որպես ներսից կիսաշրջան, սրբատաշ հիմնաքարերով գոտիավորված, մեկ արևելահայաց պատուհանով լուսավորվող խորանով եկեղեցի: Հետագայում, երկայնական առանցքով դրված միջնապատով խորանը բաժանվել է երկու փոքր, միմյանց կից, ցածր, թաղակապ աղոթարան-ավանդատների: Աղոթարանները բացվում էին դեպի սրահ, իսկ նրանց թաղածածկի հարթ տանիքին, հատակից զգալի բարձրության վրա, կազմակերպվում է խորանի նոր բեմը: Այս վերակառուցման ժամանակ, հավանաբար, հանվում է նաև խորանի հին բեմը (եթե իրոք այն սկզբնական տարբերակում եղել է): Նորակառույց աղոթարան-ավանդատներին արևելքից կիսաշրջան խորանով ապահովելու նպատակով միջնապատը արևելյան ծայրամա-

սում կորագծով լայնանում է: Հետաքրքիր լուծում է տրված նորակառույց աղոթարաններին արևելահայաց պատուհանով ապահովելու հրամայականին: Սկզբնական խորանի միակ արևելյան պատուհանի նիշը զգալիորեն բարձր է մնացել ավանդատների տանիքից: Ուստի երկու ավանդատների ծայր արևելյան կետի վերնամասում բացվող երկու նեղ խողովականման օդանցքները միանալով միջնապատի վերջնակետում, պատի զանգվածի միջով բարձրանում են վեր, դեպի արևելյան պատուհան, ապահովելով օդանցք, բայց ոչ լիարժեք լուսավորություն: Արևելյան ճակատի կենտրոնական պատուհանի հատվածը փլատակների մեջ է և այսօր հնարավոր չէ պարզել նրա տեսքը վերակառուցումից հետո: Այսպիսով ստացվում է, որ վերակառուցման ժամանակ եկեղեցու կիսաշրջան խորանում դրվում են երկու աղաթարան-ավանդատներ, իրենց կիսաշրջանին նմանվող խորաններով ու արևելահայաց պատուհաններով, իսկ խորանի նոր բեմը տեղափոխվում է արդեն աղոթարանների տանիքին, երկրորդ հարկ:

Կենտրոնական եկեղեցու խորանի տեսքը

Հարավային ավանդատան պատուհանի բացվածքը

Եկեղեցիների խորանի նմանօրինակ երկհարկանի բեմեր մենք ունենք Տող գյուղի Գտչավանքի երկրորդ եկեղեցում (13-րդ դ), ուր բեմի տակ կազմակերպված են երեք թաղակապ փոքր ավանդատներ և մեր կողմից 2012 թ. պեղված-բացված Թալիշ գյուղի Հոռեկավանքի եկեղեցում (1276 թ.), որտեղ խորանի բեմը ի սկզբանե նախագծված ու կառուցված է եղել երկու թաղակապ ավանդատների տանիքին: Եթե ընդունենք, որ երկհարկանի բեմերը 13-րդ դարից եկող Արցախյան ճարտարապետական դպրոցի մտահղացում են, ապա պետք է ենթադրել, որ Կաթողիկոսասարի վանքի կենտրոնական եկեղեցին առնվազն 7-9 րդ դարերի կառույց է, վերակառուցված 12–13-րդ դարերում:

Գտչավանքի երկրորդ եկեղեցու խորանը

Հոռեկավանքի եկեղեցու խորանը պեղումներից հետո

Կենտրոնական եկեղեցու վերակառուցված պատուհանների եզրաքարերը շարված են երկրորդական օգտագործման հարթ և կորագիծ մակերեսով սրբատաշ քարերով, ինչպիսիք հանդիպում են նաև փլատակներում: Պետք է նկատել, որ սրբատաշ շարը բնորոշ չէ այսօր երևացող ու նկարագրվող կառույցներին և, քանի որ շրջակայքում կան փլատակների կուտակումներ, քարակույտեր, խիտ անտառապատ հատվածներ, ուստի հուշարձանի տարածքում հնարավոր են այլ, այսօր չերևացող կառույցների գյուտեր: Չի բացառվում, որ վանքի տարածքում եղել է նաև սրբատաշ եկեղեցի, որի տեղն ու հետքերը չեն երևում:

Կաթողիկոսասարի վանքը, իր դժվարամատչելի, առանձնացված ու շրջապատի վրա գերիշխող դիրքով և պարսպապատի առկայությամբ, հավանաբար, ունեցել է նաև պաշտպանական ամրոցի և դիտակետի գործառույթ, քանի որ հիշատակվում է նաև «Կաթողիկոսասարի Քար» ձևով: Իսկ «քար» բառը արցախյան բարբառում նաև ամրոցի, բերդի իմաստ ունի: Այս, ու բազմաթիվ այլ հարցերի պատասխանը կարող է տալ հուշարձանի հնագիտական հետազոտությունը, ինչի կազմակերպումն ու իրականացումը դառնում է հրամայական:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կիրակոս Գանձակեցի, – 1961, Պատմութիսն Հայոց, Երևան, 1961:

Մխիթար Այրիվանեցի, – 1860, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860:

Մովսես Կաղանկատուացի, – 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983:.

Ուլուբաբյան Բ., – 1975, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975:

БАКУР КАРАПЕТЯН
Благотворительный фонд «Шуши»
info@shoushi.am
ГАГИК М. САРГСЯН
«Служба по охране исторической среды
и историко-культурных музеев-заповедников» ГНКО
gaganj@pambler.ru

ЗАБЫТЫЙ МОНАСТЫРЬ В КАТОЛИКОСАСАРЕ

РЕЗЮМЕ

В относящихся к историческому Арцаху первоисточниках и исследованиях неоднократно упоминается знаменитый Католикосасарский монастырь, как место летнего пребывания католикоса и как резиденция католикосов. Говорится, что монастырь находится в долине реки Тартар, но его точное местоположение неизвестно. В январе 2014 года экспедиция Службы охраны историко-культурных музеев-заповедников и исторической среды (Государственная некоммерческая организация) осмотрела стоящий в развалинах монастырский комплекс. Жители окрестных сел знают памятник как монастырь Тхкасар или Мец Тхкасар. Это название представляет собой краткую форму топонима Католикосасар, в соответствии с нормами арцахского диалекта.

Католикосасарский монастырь находится на территории Варнкатахской (раньше Акопа Камари) общины Мартакертского района НКР, на правом берегу реки Тартар, на противостоящей с востока селу Тонашен плоской вершине, обособленной, покрытой лесом возвышенности западного склона Католикосасарского хребта (географические координаты N 40 17 33,5 E 46 42 34,9 Алт 630) .

На сегодняшний день монастырский комплекс до основания разрушеный, представляет собой руины, окруженные густым лесом. Однако нынешнее состояние комплекса, (хоть и с оговорками), позволяет выделить на обнесенном оградой участке следы двух церквей и большого прямоугольного строения, возможно притвора или дома приходского священника, кладбище монашеское жилье и т.д.

Наибольший интерес представляет стоящая в развалинах центральная однонефная церковь. Здесь в построенной по первоначальному плану полу-

круглой апсиде в дальнейшем были устроены две маленькие ризницы – молельни, с обращенными на восток вентиляционными оконцами, навес которых – площадка второго яруса служила алтарем. Двухэтажный алтарь мы видим также и во второй церкви Гтчаванка (XIII в.), и в церкви Орекаванка (1276 г.), что можно считать нововведением арцахской архитектурной школы.

По предварительным данным строительство храма можно отнести к VII-IX вв. Наша задача на сегодня, осуществив раскопки и разбор участка, представить эту замечательную церковь, уточнить и конкретизировать возникшие вопросы.

BAKUR KARAPETYAN
«Shoushi» Benevolent Fund
info@shoushi.am
GAGIK M. SARGSYAN
"Service for the Protection of Historical Environment and Cultural Museum Reservations" NCSO
gaganj@pambler.ru

THE FORGOTTEN MONASTERY OF THE KATHOLICOSASAR MOUNTAIN

SUMMARY

In the original sources relating to the Historic Artsakh and in scholarly historiographic literature multiple mentions have been made of the notable Monastery of the Katholicos Mountainas a summer house of the Albania's Katholicoses, as well as the Monastery Seat of Katholicos.It is indicated that it was in the Valley of Tartar, but its precise spot is unknown.

In June 2014, an expedition by the RA ministry of culture and the service for the protection of forest reserves and historic environments visited the dilapidated Monastery compound. That place, among the inhabitants of the surrounding villages is known under the name of Tkkasar, or the Monastery of Big Tkkasar, which is nothing but a specially abbreviated form of the Katholicosasar word pronounced in the Artsakh dialect.

The Monastery of the Catholicosasar Mount is located Varnkatagh(former Hakob Kamar) community territory, Martakert region of the Republic of Mountainous Karabakhon the right bank of the river Tartar, Facing the Tonashen village on the Easton the Western slopeof the Katholicosasar mountain rangeis a stand-alone elevated peak surrounded by forest, on the flat summit (geographic coordinates N. 40 17 33,5 E. 46 42 34,9 Alt. 630):

The Monastery compound has reached us in its demolishedcondition, surrounded with rubble and thick forests. The degree of demolition is such that today, with some reservations, one could delimit with a dividing wall at least two churches, a large rectangular building (possibly a courtyard, a chapel), a graveyard, the living quarters of the parishioners, etc.

Of great interest is a demolished single-nave church in the center. Here, in the original semicircularaltar added later were two smallvaulted chapels dormer windows facing the East, with their roof designed as a stage. There were also two-storey stages in the second church of Gtchavank (13th c.) and Horekavank (1276), which can be regarded as an innovation by the Artsakh architectural school.

Preliminary data show that the building can be attributed to 7 – 9 cc, while the renovation to 12 – 13 cc. The major objective today is to do the excavations and to expose this remarkable monastery, with a complete clarification of the arising questions.